



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի (վարչական դատարան) դատարան
Վարչական գործ N 0074/05/2011թ.
Նախագահող դատավոր՝ Ա. Աբրահամյան

վարչական գործ N 0074/05/2011թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

6-ին սեպտեմբերի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ

Ջ. Օհանյանի
Շ. Օհանյանի
Ա. Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Անուշ Արմենի Ալեքսանյանի ընդդեմ Չլդրանի միջնակարգ դպրոցի տնօրենի՝ հայտարարված տույժերը, աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելու և աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար չվճարված աշխատավարձը՝ ներառյալ այլ վայրում աշխատելու համար հավելավճարները և խախտված իրավունքը վերականգնելու համար կատարած ծախսերը բռնագանձելու պահանջների մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2011թ. հունիսի 30-ի վճռի դեմ բերված հայցվոր Անուշ Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Անուշ Ալեքսանյանը պահանջել է անվավեր ճանաչել Չլդրանի միջնակարգ դպրոցի տնօրենի (այսուհետ՝ Գործատու) հայտարարված տույժերը, աշխատանքից ազատելու հրամանը և վերականգնել աշխատանքում, բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար չվճարված

աշխատավարձը՝ ներառյալ այլ վայրում աշխատելու հավելավճարները և խախտված իրավունքը վերականգնելու համար կատարված ծախսերը:

Վարչական դատարանի 30.06.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Անուշ Ալեքսանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ստորև շարադրվող հիմնավորումներով.

Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ, 24-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, պետք է կիրառեր և չի կիրառել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 19-րդ հոդվածի, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, 220-րդ, 222-րդ, 216-րդ, 218-րդ, 226-րդ և 227-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել և կիրառել նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերը, պետք է կիրառեր նշված օրենսգրքի 121-րդ, 127-րդ և 223-րդ հոդվածները, ինչպես նաև խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 123-րդ հոդվածների և 138-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները:

Վարչական դատարանը պետք է կիրառեր և չի կիրառել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, ԼՂՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ, 21-րդ, 27-րդ և 34-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանը վճիռն ընդհանրապես չի հիմնավորել, ներկայացված ապացույցներին վճռում որևէ գնահատական չի տվել, չի որոշել, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, վճռի պատճառաբանական մասում չի նշել այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, չի նշել այն օրենքներն ու իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս, ընդամենը շարադրել է կողմերի և վկաների ցուցմունքները:

Վարչական դատարանը չի կատարել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որն անհրաժեշտ էր դատարանի ներքին համոզմունք ձևավորելու համար, չի պարզել գործի համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, կարգապահական տույժ տալու իրավաչափությունը, դպրոցի ներքին կարգապահական կանոնների և գործատուի կողմից ընդունված ներքին ակտերի առկայությունը, նաև այն, թե, արդյոք, ինքն իրազեկվել է դրանց մասին, որոնցով սահմանված է աշխատանքային կարգապահությունը, որն, իբր, չի կատարել ինքը:

Վարչական դատարանը չի պարզել իրեն կարգապահական տույժեր տալու հիմքերը, գործատուն տույժեր տալիս պահպանել է արդյոք կարգապահական տույժ տալու օրենքով սահմանված կարգը և ժամկետը: Արդյունքում իր կողմից առանց նոր կարգապահական խախտում կատարելու, Գործատուն ազատել է աշխատանքից, լուծելով աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև Վարչական դատարանը չի պարզել, թե իր որ արարքն է անհամատեղելի, որպես վստահությունը կորցրած աշխատողի, տվյալ աշխատանքը շարունակելու հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 0074/05/11 վարչական գործով 2011 թվականի հունիսի 30-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 18.10.2010թ. N15 ուղեգրի համաձայն Անուշ Ալեքսանյանն ուղեգրվել է Մարտակերտի շրջանի Չլդրանի միջնակարգ դպրոց՝ որպես մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչ:

2. Գործատուի և Անուշ Ալեքսանյանի միջև 25.10.2010 թվականին կնքված N03 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Անուշ Ալեքսանյանն ընդունվել է աշխատանքի որպես մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչուհի՝ երեք տարի ժամկետով:

3. Գործատուի 08.02.2011թ. N 8 հրամանը՝ Անուշ Ալեքսանյանին հայտարարել նկատողություն՝ դպրոցի ներքին կարգապահական կանոնների, աշխատանքային կարգապահության չպահպանման, աշխատանքի սահմանված նորմաների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև տնօրինության նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, մարդկանց առողջությանը բարեխղճորեն չվերաբերվելու և դրանով իսկ կարգապահական խախտումների ծագման և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

4. Գործատուի 05.03.2011թ. N 18 հրամանը՝ Անուշ Ալեքսանյանին հայտարարել խիստ նկատողություն՝ դպրոցի ներքին կարգապահական կանոնների, աշխատանքային կարգապահության խախտման և չպահպանման, մասնավորապես, չհարգելով մանկխորհի որոշումը, 02.03.2011թ. տնօրենի, ԼՂՀ կրթության պետական տեսչապետի և տեսուչի նկատմամբ խայտառակ անհարգալից վերաբերմունք և հակամանկավարժական վարքագիծ դրսևորելու, դրանով իսկ կարգապահական խախտումների զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

5. Գործով չկան տվյալներ մինչև կարգապահական տույժի կիրառումը Գործատուի կողմից Անուշ Ալեքսանյանից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու վերաբերյալ ողջամիտ ժամկետ սահմանելու և Անուշ Ալեքսանյանի բացատրությունները կարգապահական խախտման վերաբերյալ:

6. Գործով առկա չեն Գործատուի ներքին իրավական ակտերը՝ ներքին կարգապահական և վարքագծի կանոնները, ինչպես նաև Անուշ Ալեքսանյանը նշված ակտերին ծանոթացված լինելու մասին ապացույցներ:

7. Գործատուի 11.04.2011թ. N 23 հրամանը՝ Անուշ Ալեքսանյանին ազատել աշխատանքից, լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մաս, կետ 5-րդ, 6-րդ և N 03 աշխատանքային պայմանագրի 2.4.1. կետով:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելիս՝ գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը...:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության... նկատմամբ տարածվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Նույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Գերագույն դատարանն իր որոշումներում այս կապակցությամբ նշել է, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում պարտավոր է տալ վճռի փաստական և իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համար դատական նորմ(եր)ի ընտրության և կիրառման մեջ, այն նորմ(եր)ի, որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Ընդ որում, վճռում պետք է ցույց տալ նորմատիվ ակտի հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմ(եր)ը, ինչպես նաև պատճառաբանվի, թե ինչու հատկապես պետք է կիրառվի հենց այդ նորմ(եր)ը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծելով դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տես, օրինակ, ԼՂՀ Գերագույն դատարանի Սերգեյ Աբգարի Մկրտչյանի հայցով ընդդեմ Հրանտ Մաթևոսի Դանիելյանի, Ստեփանակերտի նոտարական տարածքի նոտարի... ժառանգությունը փաստացի ընդունելու հիմքով սեփականության իրավունքը ճանաչելու... N 1779/02/09թ. քաղաքացիական գործով 29.04.2011թ. կայացրած որոշումը):

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանը սույն գործով չի պահպանել վերոնշյալ նորմերի պահանջները, կայացված վճռում միայն շարադրել է գործին մասնակցող անձանց դիմումների ծավալուն շարադրանքը, ավելին քան արձանագրված է դատական նիստի արձանագրությունում, վճռի պատճառաբանական մասում չի նշել դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև նշված չէ և ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է Վարչական դատարանը վեճը լուծելիս:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ Վարչական դատարանի վճիռը չի համապատասխանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներին և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև՝ հեղինակավոր:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտավորությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասում և Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված իրավունքը ենթադրում է Վարչական դատարանի պարտականությունը՝ հիմնավորել իր կայացրած դատական ակտը:

Սույն գործով Վարչական դատարանի վճռում իրավական հիմնավորում չտալը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն Գերագույն դատարանը գնահատում է որպես դատավարական իրավունքի նորմերի խախտում, որը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Այսպիսով, վերոնշյալ հիմքի առկայությունը Գերագույն դատարանը գտնում է բավարար, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Դատական ակտը բեկանելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկված վարչական մարմնի գործողությունները և դրանց իրավաչափության ստուգման համար անհրաժեշտ է դատական նոր քննություն:

Սույն որոշման հիմնավորումները հաշվի առնելով Գերագույն դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Անուշ Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Վարչական դատարանի 2011թ. հունիսի 30-ի վճիռն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Զ. ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Շ. ՕՀԱՆՅԱՆ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ